ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-7/3-6

ք. Երևան 01 .04.2019թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ռ.Մանուկյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հացաթխման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Մատակարարվող տարածաշրջաններից ՀՀ ՋՈՒ ԹՎ անասնաբուժական և ՈԲՎ հիգիենիկ և համաճարագային անվտանգության ծառայությունների կողմից, յուրաքանչյուրը ոչ պակաս ամիսը 4 անգամ կատարի նմուշառում և տրվի որակի և տեխնիկական բնութագրում նշված ցուցանիշների վերաբերյալ եզրակացություն:

Հացի որակական ցուցանիշները ստուգելու նպատակով, հացի նմուշառումը կարող է իրականացվել զորամասից, հաց տեղափոխող մեքենայից, ինչպես նաև հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպությունից: Առաջին պահանջի դեպքում մատակարար կազմակերպությունը պետք է ապահովի իր ներկայացուցչի ներկայությունը, չներկայանալու դեպքում նմուշառումը իրականացվելու է առանց ներկայացուցչի՝ մնացած մասնակիցների ներկայությամբ:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Յուրաքանչյուր տարածաշրջանի մասով զորամասին պետք է ներկայացնի հաց-հացաբուլկեղեն տեղափոխող փոխադրամիջոցի սանիտարական անձնագրերի պատճենները, համաձայն ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 14.03.2017թ. թիվ 85 հրամանով հաստատված կարգի:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 114 846 672 (մեկ հարյուր տասնչորս միլիոն ութ հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր յոթանասուներկու) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղ. թիվ 33
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ, Աբովյան մ/ճ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 163088124793
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 03505108
ՀՎՀՀ 02522157	
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Ա.ԱՍԱՐԵՅԱՆ	Ռ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-7/3-6 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հացաթխման ծառայություն իրականացնելու համար տրամադրվելիք ալյուրի տեխնիկական բնութագիրը

Հ/հ	Ապրանքատեսակի (աշխատանքի, ծառայության անվանումը)	Տեխնիկական բնութագիր
1	Ալյուր ցորենի 1-ին տեսակի	ՀՍՏ 280-2007, ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 14.5 %-ից, 50կգ-ոց պոլիէթիլենային պարկերով: Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ծանոթություն՝

1* **Յուրաքանչյուր ալյուրի պարկերի վրա ներկով, 50-ից 60մմ բարձրությամբ տառերով մակնանշված լինի՝**

1. Արտադրող ձեռնարկության անվանումը
2. Արտադրանքի անվանումը, տեսակը
3. Ապրանքի քաշը՝ բրուտտո, նետտո
4. Պահպանման ժամկետը և պայմանները
5. Արտադրության տարին, ամիսը, օրը (ամիսը և օրը մատակարարի կողմից դաջվում է թանաքով)
6. <<Հինվորի բաժին: Վաճառքի ենթակա չէ>> գրառումը

2* Գնորդի կողմից որոշված ստացողին պետք է հանձնել 50 օրից ոչ պակաս վաղեմության արտադրած ալյուր ցորենի 1-ին տեսակի՝ սույն պայմանագրի տեխնիկական բնութագրի համապատասխան:

3* Ալյուրի տեղափոխումը մինչև ապրանքագրում նշված հացաթխման կազմակերպություն, իրականացվելու է ալյուր մատակարարող կազմակերպության կողմից:

4* Հացաթխման կազմակերպություններին ալյուրի հատկացումը իրականացվելու է համաձայն ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերով:

5* Մատակարարը պարտավոր է ալյուրը հացաթխման ծառայություն մատուցող կազմակերպություններին հատկացնել համաձայն ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերում նշված քանակների և ժամկետների:

6* Ապրանքագրում նշված ժամկետը խախտելու յուրաքանչյուր դեպք դիտել որպես ուշացում և պայմանագրի շրջանակներում կիրառել համապատասխան տույժեր:

7* Յուրաքանչյուր ամսվա մինչև 5-ը ալյուր մատակարարող կազմակերպությունը, հատկացված ալյուրի վերաբերյալ պետք է հաշվետվություն ներկայացնի ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայություն:

8* Ալյուր մատակարարող կազմակերպությունը յուրաքանչյուր խմբաքանակի համար, ստացողին ալյուրի հանձնման ժամանակ պետք է տրամադրի իր կողմից ստուգված ալյուրի որակական ցուցանիշների վերաբերյալ լաբորատոր հետազոտության փաստաթուղթ:

Հացաթխման ծառայության տեխնիկական բնութագիրը

Հ/հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Կոտայքի տարածաշրջան)	Ընդհանուր խմբաքանակից՝ մինչև 60%-ը կաղապարային հաց, մինչև 40%-ը՝ լավաշ. - հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը 42-44%, թթվայնության աստիճանը՝ 2,5-3,5, քաշը՝ միջինը 650 գր +/- 3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ ոչ պակաս 65%-ից: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, - լավաշ, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը ոչ ավել 25-28%, թթվայնության աստիճանը՝ 2.5-3.5, քաշը՝ միջինը 200 գր +/- 15% թույլատրելի շեղումով: Փաթեթավորված պոլիէթիլենային հերմետիկ փակված պարկերով՝ 1 պարկի մեջ մինչև 2 կգ: Անվտանգությունը N2-III4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Կոտայքի տարածաշրջանում հացաթխման ծառայության մատուցումն իրականացվելու է Լուսակերտ - 55076 զորամաս, Բալահովիտ - 95532 զորամաս, Զառ ուս. կենտրոն- 95532 զորամաս, Ջորաղբյուր - 43755 զորամաս, Արզնի - 56265 զորամաս:
2	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Երևանի և հարակից տարածաշրջաններ)	Ընդհանուր խմբաքանակից՝ մինչև 60%-ը կաղապարային հաց, մինչև 40%-ը՝ լավաշ. - հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը 42-44%, թթվայնության աստիճանը՝ 2,5-3,5, քաշը՝ միջինը 650 գր +/- 3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ ոչ պակաս 65%-ից: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, - լավաշ, 1-ին տեսակի ցորենի ալյուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը ոչ ավել 25-28%, թթվայնության աստիճանը՝ 2.5-3.5, քաշը՝ միջինը 200 գր +/- 15% թույլատրելի շեղումով: Փաթեթավորված պոլիէթիլենային հերմետիկ փակված պարկերով՝ 1 պարկի մեջ մինչև 2 կգ: Անվտանգությունը N2-III4,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Երևանի և հարակից տարածաշրջաններում հացաթխման ծառայության մատուցումն իրականացվելու է Մուղնի - 54850 զորամաս, Արափար - 80088 զորամաս, Քասախ - 93353 զորամաս, Երևան - 25149 զորամաս, Երևան - 31549 (14746, 28920) զորամաս, Երևան - 88865 զորամաս, Երևան - 42285 զորամաս:

3	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Երևանի տարածաշրջան)	Ընդհանուր խմբաքանակից՝ մինչև 60%-ը կաղապարային հաց, մինչև 40%-ը՝ լավաշ. - հաց կաղապարային, 1-ին տեսակի ցորենի այլուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը 42-44%, թթվայնության աստիճանը՝ 2,5-3,5, քաշը՝ միջինը 650 գր +/- 3% թույլատրելի շեղումով, ծակոտելիությունը՝ ոչ պակաս 65%-ից: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, - լավաշ, 1-ին տեսակի ցորենի այլուրից, ՀՍՏ 31-99: Խոնավությունը ոչ ավել 25-28%, թթվայնության աստիճանը՝ 2.5-3.5, քաշը՝ միջինը 200 գր +/- 15% թույլատրելի շեղումով: Փաթեթավորված պոլիէթիլենային հերմետիկ փակված պարկերով՝ 1 պարկի մեջ մինչև 2 կգ: Անվտանգությունը N2-II14,9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Երևանի տարածաշրջանում հացաթխման ծառայության մատուցումն իրականացվելու է Երևան - 32822 զորամաս, Երևան - 59559 զորամաս, Երևան - 10724 (29632) զորամաս, Երևան - 14203 զորամաս, Նուբարաշեն - 55565 (47379, 38451, 24923) զորամաս:

Ծանոթություն՝ Հացի և լավաշի առաքումը զորամասեր իրականացվում է զորամասերի կողմից նախորդ օրը տրված հայտերի հիման վրա՝ համապատասխան քանակի:

Պատրաստի հացի և լավաշի տեղափոխումը զորամասեր պետք է իրականացվի մատակարարի միջոցով՝ հացի համար նախատեսված մեքենայով՝ ամեն օր, հացի համար նախատեսված տեփուրներով, մինչև ժամը 11.00-ն: Ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը հացի և լավաշի առաքումը հացաթխումից հետո իրականացնել 6 ժամից ոչ շուտ, իսկ նոյեմբերի 1-ից մինչև մարտի 31-ը՝ 4 ժամից ոչ շուտ:

Տարվա ընթացքում զորամասի մշտական տեղակայման վայրից բացի, զորամասի անձնակազմը զորավարժարանում գտնվելու ժամանակ, հացաթխում իրականացնող կազմակերպությունը հացի և լավաշի մատակարարումը պետք է իրականացնի զորավարժարան, մինչև 150 կմ հեռավորությամբ:

Յուրաքանչյուր ամսվա մինչև 5-ը, հացաթխում իրականացնող կազմակերպությունը, մնացորդի, թխված հացի, ստացված և ծախսված այլուրի հաշվետվությունը, ինչպես նաև մատակարարված հացի վերաբերյալ զորամասի և կազմակերպության միջև, ըստ օրերի կազմված երկկողմանի փոխադարձ ակտը պետք է ներկայացնի ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայություն:

1 կգ հացի թխման համար պաշտպանության նախարարության կողմից տրամադրվում է 0,757 կգ, իսկ լավաշի թխման համար՝ 0.880 կգ այլուր ցորենի 1-ին տեսակի՝ 14,5% խոնավության նորմանների համաձայն: Հացի և լավաշի թխման համար անհրաժեշտ մնացած նյութերը ներառվում է ծառայության մեջ:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Ծառայության մատուցումը ըստ տարածաշրջանների	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	2019թ. անհրաժեշտ քանակը		
						1-ին կիսամյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 20.12.2019թ.
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Կոտայքի տարածաշրջան)	կգ	232000	147	34104000	19000	106000	107000
2	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Երևանի և հարակից տարածաշրջաններ)	կգ	213504	168	35868672	30000	92000	91504
3	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Երևանի տարածաշրջան)	կգ	277000	162	44874000	23000	127000	127000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՊԱՊՈՒՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղ. թիվ 33
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ Աբովյան մ/ճ
Հ/Հ 16308824793
ՀՎՀՀ 03505108

Տնօրեն

Ռ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-7/3-6 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Գնման ենթակա ծառայության անվանումը	CPV-կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ.-ին ըստ ամիսների, բայց որ ուշ քան 20.12.2019թ., ընդ որում								
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Կոտայքի տարածաշրջան)	98391170/35/10/1	2793000	2793000	2793000	18375000	18375000	18375000	34104000	34104000	34104000
2	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Երևանի և հարակից տարածաշրջանները)	98391170/36/10/1	5040000	5040000	5040000	20496000	20496000	20496000	35868672	35868672	35868672
3	հացաթխման ծառայություն (հացաթխման ծառայություն՝ Երևանի տարածաշրջան)	98391170/37/10/1	3726000	3726000	3726000	24300000	24300000	24300000	44874000	44874000	44874000

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ֆինանսների նախարարության
ռեզերվային հիմնադրամի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ
Կոտայքի մարզ, ք.Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղ. թիվ 33
«Հայեկոնոմբանկ» ԲԲԸ, Աբովյան մ/ճ
Հ/Հ 163088124793
ՀՎՀՀ 03505108

Տնօրեն

Ռ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-7/3-6 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-7/3-6 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Պատվիրատուի անվանումը Կատարողի անվանումը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն